Հյուրանոցային համալիրի կառուցման ներդրումային նախագիծ

Ծրագրի նկարագիրը	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հանրապետության փողոց 65 հասցեում նախատեսվում է կառուցել բարձրակարգ հյուրանոցային համալիր՝ նախկին տպարանի շենքի վերակառուցմամբ: Ըստ նախագծի, գոյություն ունեցող շինության եզրային մասնաշենքերը վերակառուցվելու են, իսկ դրանցից ետ գտնվող միջանկյալ մասնաշենքի փոխարեն նախատեսվում է մեկ նկուղային և ինը վերգետնյա հարկերով կառույց: Հյուրանոցային համալիրը ունենալու է շուրջ 200 համար, խորհրդակցությունների և միջոցառումների դահլիճներ, ռեստորաններ, սրճարաններ, լողավազաններ, մարզասրահներ և ժամանակակից հյուրանոցային տնտեսությանը անհրաժեշտ այլ ծառայություններ: Համալիրի ամբողջ տարածքը հարմարեցված է լինելու հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ պայմաններով:
Տեխնիկական ցուցանիշներ	Հողամասի մակերեսը կազմում է 0.5781.5հա, շենքերի կառուցապատման մակերեսը՝ 2467քմ, կանաչապատ մակերեսը՝ 1440քմ, ավտոկայանատեղի՝ 300քմ: Հարկայնությունը՝ 9 վերգետնյա և 1 նկուղային հարկ:
Ծրագրի ժամկետներ	Շուրջ 3 տարի
Ծրագրի արժեքը	Ծրագրի արժեքը կազմում է շուրջ 13 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի կողմից, կառուցապատող՝ «Աստորիա ինվեստ» ՓԲԸ:
Ներկա իրավիճակ	Ընթացքի մեջ են գլխավոր մասնաշենքի հիմքերի կառուցման աշխատանքները: